ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 356

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքը (Աբովյան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Աբովյան համայնքի (Աբովյան բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքը (Աբովյան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-002-0121-0038 կադաստրային ծածկագրով 0.3085 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հող, գոտևորման նախագծում ԲՆՌԳ	07-002-0121-0038 կադաստրային ծածկագրով 0.3085 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր, ինչպես նաև գոտևորման նախագծում ԲՆԿԳ-4 (16 հարկ վերգետնյա, 2 հարկ ստորգետնյա)

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների կողմից ներկայացված պայմանները (կցվում են):

4. ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Աբովյան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, «24» «հոկտեմբերի» 2025 թ.